ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» հոկտեմբերի 2020 թվականի N **339**

ԷԼԻՆԱ ԿԱՐԵՆԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կարեն Կարապետի Այվազյանը և Սոնա Սեյրանի Գրիգորյանը փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ են եղել 2013թ-ից: Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ունեցել են մեկ երեխա՝ Էլինա Կարենի Այվազյանին, ծնված՝ 19.05.2014թ.: Վերջինս ծնվել է Ռուսաստանի Դաշնության Սոչի քաղաքում:

Երեխայի մայրը՝ Սոնա Գրիգորյանը խնամել է դստերը մինչև 2 տարեկանը, որից հետո թողնելով երեխային հոր՝ Կարեն Այվազյանի խնամքին, հեռացել է տնից: Մոր գտնվելու վայրը մինչ օրս հայտնի չէ: Հայրը՝ Կարեն Այվազյանը մեկնել է Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի: Ներկայումս երեխան հայրական կողմի տատի և պապի հետ միասին բնակվում է ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք.Աշոտաբերդ թաղամաս թիվ 18/1 հասցեում: Էլինա Այվազյանի խնամքով և դաստիարակությամբ զբաղվում է տատիկը՝ Գոհար Այվազյանը: Վերջինս Էլինա Այվազյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու համար դիմել է Ստեփանավան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին:

Հիմք ընդունելով Գոհար Այվազյանի 25.09.2020թ. թիվ Ա-316 դիմումը, Ստեփանավանի համայնքապետարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 30.09.2020թ. նիստի եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 33, 34, 37, 38 հոդվածներով, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8, 13 հոդվածներով, ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման 9-րդ կետի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ***որոշում եմ.***

1. Անչափահաս Էլինա Կարենի Այվազյանի (ծնված՝ 19.05.2014թ., ծննդ. վկայական IV-ԱԳ N-765458) նկատմամբ խնամակալ նշանակել չափահաս, գործունակ քաղաքացի՝ Գոհար Մաքսիմի Այվազյանին (ծնված՝ 14.07.1957թ., անձնագիր՝ AM0437871, տրված 30.08.2011թ., 053-ի կողմից):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» հոկտեմբերի 2020 թվականի N 340

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 46Ա ՀԱՍՑԵՈՎ ԵՎ 06-007-0065-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչյա Սերյոժայի Սուքիասյանի կողմից 02.10.2020թ. ներկայացված թիվ Ս-321 դիմումը և 13.02.2008թ. թիվ 2484968 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 238 -Ն որոշմամբ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 46ա հասցեով՝ 06-007-0065-0018 կադաստրային ծածկագրի տակ գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Ավետիսյան փողոց թիվ 48:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ**